ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրված ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին ԴՊ.

ք. Երևան «__» _____ 2026թ.

Հայաստանի կինոյի հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), ի դեմս տնօրեն Դավիթ Բանուչյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «_____» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ֆիլմարտադրող), ի դեմս տնօրեն ____, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում միասին անվանվելով «Կողմեր», հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հայաստանի կինոյի հիմնադրամի միջև 2025 թվականի սեպտեմբերի __-ին կնքված թիվ ՄՇԴ-____ պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիրը (այսուհետ՝ «Դրամաշնորհի պայմանագիր», էլ.հղում՝_____-), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝«Պայմանագիր») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1. Ֆիլմարտադրողը պարտավորվում է Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել **«___»** պայմանական վերնագրով անիմացիոն կարճամետրաժ ֆիլմի (այսուհետ՝ Ֆիլմ) արտադրության փուլի աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների, իսկ Հիմնադրամը պարտավորվում է տրամադրել ֆինանսավորում Պայմանագրի 1.6 կետով նախատեսված չափով և ժամկետներում:

1.2. Ֆիլմը ստեղծվելու է _____ **/ՀՀ/** գրած սցենարի հիման վրա:

1.3. Ֆիլմի Բեմադրող Ռեժիսոր ___ **/ՀՀ/**, Պրոդյուսեր՝ _____ **/ՀՀ/:**

1.4. Ֆիլմի պարամետրներն են՝

- Ֆիլմի աշխատանքային անվանում՝ **«____»**,
- Ֆիլմի տեսակ՝ _____
- Ֆիլմի ժանրը՝ _____
- Չևաչափ՝ _____
- Գույն՝ _____
- Ձայնը՝ _____
- Բնօրինակ լեզու՝ _____
- Տևողությունը՝ __ րոպե:

1.5. Աշխատանքի ընդհանուր բյուջեն կազմում է _____ (_____) ՀՀ դրամ՝ համաձայն Հավելված 1-ի, որից

1.5.1 2026 թվականին՝ Աշխատանքի բյուջեն կազմում է _____ (____) ՀՀ դրամ,

1.5.2 2027 թվականին՝ Աշխատանքի բյուջեն կազմում է _____ (____) ՀՀ դրամ:

1.6. Աշխատանքի իրականացման համար Հիմնադրամը ընդհանուր տրամադրելու է _____ (_____) ՀՀ դրամ, որից՝

1.6.1. 2026 թվականին՝ Աշխատանքի իրականացման համար Հիմնադրամը տրամադրելու է _____ (_____) ՀՀ դրամ, որը վճարվելու է թիվ ՄՇԴ-____ Դրամաշնորհի Պայմանագրով Հիմնադրամին տրամադրված գումարի շրջանակներում՝ կինոնկարների արտադրության համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում, որը պետք է ծախսվի Ֆիլմարտադրողի կողմից Հավելված 1-ով (նախահաշվով) և Հավելված 2-ով (ժամանակացույցով) սահմանված կարգով:

1.6.2. 2026 թվականին՝ Աշխատանքի իրականացման համար Հիմնադրամը տրամադրելու է _____ (_____) ՀՀ դրամ՝ 2026թ. «Կինեմատոգրաֆիայի ծրագրով» «Կինոնկարների արտադրություն» միջոցառման համար նախատեսված և 2026թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության ու Հայաստանի կինոյի հիմնադրամի միջև կնքված պայմանագրով սահմանված բյուջետային հատկացումների առկայության պարագայում:

1.7. Աշխատանքի իրականացման համար Ֆիլմարտադրողը ներդնելու է _____ (_____) ՀՀ դրամ, որից՝

1.7.1. 2026 թվականին՝ Աշխատանքի իրականացման համար՝ _____ (_____) ՀՀ դրամ:

1.7.2. 2027 թվականին Աշխատանքի իրականացման համար ՝ _____ (_____) ՀՀ դրամ:

1.8. Աշխատանքի կատարման սկիզբ է համարվում __.__.2025թ., ավարտը՝ __.__.2026թ:

1.8.1. 2026 թվականին՝ Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում __.__.2025թ.-ից մինչև __.__.2026թ.:

1.8.2. 2027 թվականին՝ Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում __.__.2027թ.-ից մինչև __.__.2027թ.:

1.9. Ֆիլմարտադրողն իրավունք ունի Աշխատանքը՝ իր կողմից կատարվելիք ներդրումների մասով, սկսել ավելի վաղ ժամկետում՝ ներկայացնելով դրանք հավաստող և Պայմանագրով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

1.10. Պայմանագրով Հիմնադրամի և Ֆիլմարտադրողի պարտավորությունների ժամկետը սահմանվում է՝ Պայմանագրի կնքման պահից մինչև Ֆիլմարտադրողի կողմից Հիմնադրամի հանդեպ ստանձնած բոլոր պարտավորությունների կատարումը:

2 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հիմնադրամն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ, առանց որևէ սահմանափակումների միջնորդել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը և պետական այլ մարմիններին ստուգել Ֆիլմարտադրողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը և որակը, ինչպես նաև Հիմնադրամի աշխատակիցների մասնակցությամբ իրականացնել մոնիթորինգ նկարահանման աշխատանքների նկատմամբ, առանց միջամտելու Ֆիլմարտադրողի գործունեությանը (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի):

2.1.2. Ֆիլմարտադրողից՝ ամիսը մեկ անգամ գրավոր հարցումով պահանջել ու ստանալ տեղեկատվություն Պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.1.3. Ֆիլմարտադրողից պահանջել առանց լրացուցիչ վճարի կատարել ոչ պատշաճ կարգով կատարված աշխատանքները:

2.1.4. Վերահսկել Ֆիլմարտադրողի կողմից Պայմանագրի 1.5 կետում նշված գումարների օգտագործումը, ըստ Կողմերի միջև հաստատված նախահաշվի /Հավելված 1/ և ժամանակացույցի /Հավելված 2-ի/:

2.1.5. Ֆիլմարտադրողի կողմից 2.3.1–2.3.27 կետերով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու դեպքում, միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները: Նման դեպքում, Ֆիլմարտադրողն իրավունք չունի ներկայացնել Հիմնադրամին իր համար առաջացած ցանկացած տեսակի վնասների հատուցման պահանջ:

2.1.6. Օգտագործել Պայմանագրի 2.3.18 կետով սահմանված ֆոտո և տեսանյութեր իր հայեցողությամբ, Ֆիլմի գովազդային, արխիվային և այլ նպատակներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.1.7. Օգտվել Պայմանագրի 2.2.17 և 2.2.19 կետերով նշված իրավունքներից՝ նախապես ստանալով Ֆիլմարտադրողի գրավոր համաձայնությունը:

2.1.8. Հիմնադրամի աշխատակցի միջոցով անցկացնել Աշխատանքների իրականացման մոնիթորինգ՝ Պայմանագրի 1.6 կետով նախատեսված գումարի ծախսման մասով:

2.1.9. Համաշխարհային պրեմիերայից հետո, ցանկացած մշակութային միջոցառման ժամանակ, օգտագործել Ֆիլմը ոչ կոմերցիոն նպատակներով՝ Ֆիլմարտադրողի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

2.1.10. Ֆիլմի նախահաշվով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների (խնայողությունների) դեպքում՝ Ֆիլմարտադրողին տրամադրված ֆինանսավորման և Ֆիլմարտադրողի կողմից ներդրված ֆինանսական միջոցների համար կիրառել համամասնության սկզբունքը՝ ըստ յուրաքանչյուր տարվա համար նախահաշվով ներկայացված ներդրումների համամասնության:

<u>2.2. Ֆիլմարտադրողն իրավունք ունի.</u>

2.2.1. Պատրաստել Ֆիլմի կրկնօրինակները ցանկացած նյութական կրիչի վրա,

2.2.2. Իրականացնել Ֆիլմի բնօրինակի կամ կրկնօրինակների տարածումը, ներառյալ վերջիներիս բազմացման նպատակով,

2.2.3. Ֆիլմը վերամշակել (ռեստավրացիա, գունային կորրեկցիա),

2.2.4. Իրականացնել Ֆիլմի հրապարակային ցուցադրում,

2.2.5. Իրականացնել Ֆիլմի հանրային ցուցադրում և կատարում,

2.2.6. Իրականացնել Ֆիլմի բնօրինակի և կրկնօրինակների վարձույթ,

2.2.7. Իրականացնել Ֆիլմի հասարակական ցուցադրում, որի տակ Կողմերը հասկանում են ցուցադրում հեռուստատեսությամբ, ինչպես նաև ռետրանսլյացիայի միջոցով, անհատույց թե հատուցելի կարգով, ներառյալ անհատական Պայմանագրերով,

2.2.8. Իրականացնել Ֆիլմի կաբելային ցուցադրում, որի տակ կողմերը հասկանում են համընդհանուր ցուցադրում հեռուստատեսության միջոցով, կաբելի, օպտիկական մալուխային և նմանատիպ այլ ձևերով, անհատույց թե հատուցելի կարգով, ներառյալ անհատական Պայմանագրերով,

2.2.9. Իրականացնել Ֆիլմի հասանելիության ապահովումը հասարակությանը տարբեր ձևերով, ներառյալ այն դեպքերի, երբ ցանկացած անձ ցանկացած վայրից հնարավորություն ունենա դիտել այն, ինչպես նաև Ինտերնետի միջոցով,

2.2.10. Իրականացնել Ֆիլմի թարգմանություն, դուբլյաժ, սուբտիտրավորում ցանկացած լեզվով, ցանկացած տեսակի վերափոխում և վերափոխման արդյունքում ցանկացած ձևով օգտագործում,

2.2.11. Իրականացնել Ֆիլմի վիզուալ մասի օգտագործում, որի տակ Կողմերը հասկանում են Ֆիլմի այն մասը, որը օգտագործվում է Ֆիլմի երաժշտական մասից անջատ՝ ցանկացած ձևով և ցանկացած միջոցների օգնությամբ,

2.2.12. Իրականացնել Ֆիլմի երաժշտական մասի օգտագործում, որի տակ Կողմերը հասկանում են Ֆիլմի այն մասը, որը օգտագործվում է Ֆիլմի վիզուալ մասից անջատ՝ ցանկացած ձևով և ցանկացած միջոցների օգնությամբ,

2.2.13. Ֆիլմի սցենարի հիման վրա ստեղծված աուդիովիզուալ ստեղծագործությունների բեմադրություն՝ "ռիմեյք", օգտագործելով նույն թեման, դերասաններին, երկխոսությունները և այլ էական տարրերը,

2.2.14. Իրականացնել Ֆիլմի դերասանների, երկխոսությունների օգտագործմամբ այլ աուդիովիզուալ ստեղծագործությունների բեմադրությունը, որոնք հանդիսանում են որպես Ֆիլմի սցենարի շարունակություն՝ սիքուել (sequel),

2.2.15. Ֆիլմը օգտագործել ցանկացած տեսակի ապրանքների պատրաստման հարցում, ներառյալ՝ էլեկտրոնային և այլ տեսակի խաղալիքների, հագուստի պարագաների, տպագրական նյութերի, սննդամթերքի, ինչպես նաև ծառայությունների մատուցման բնագավառում (օրինակ՝ ժամանցի կենտրոններում "մերչնդայզինգ"),

2.2.16. Իրականացնել համատեղ օգտագործում աուդիո և վիդեոձայնագրությունների, լուսանկարների և այլ ձայնային տարրերի, ինչպես նաև ծրագրային ապահովման այլ հնարավորությունների հետ մեկտեղ, որոնք հնարավորություն են տալիս կազմակերպել ինտերակտիվ շփում,

2.2.17. Ֆիլմի դրվագներն օգտագործել գովազդային տեսահոլովակների և այլ տեսակի գովազդների պատրաստման համար:

2.2.18. Բանակցություններ վարել և պայմանագրեր ստորագրել այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ Ֆիլմը տարածելու, ինչպես նաև կոմերցիոն նպատակներով բոլոր լեզուներով օգտագործելու համար, վերջիններիս, փոխանցել Ֆիլմի նկատմամբ Ֆիլմարտադրողին պատկանող իրավունքները կամ դրանց մի մասը:

2.2.19. Ֆիլմից կադրեր օգտագործել տպագրական աշխատանքներում:

2.2.20. Հիմնադրամից պահանջել ընդունել Պայմանագրի 1.1 կետով սահմանված և Ֆիլմարտադրողի կողմից Պայմանագրին համապատասխան պատշաճ կարգով և ժամկետներում կատարված Աշխատանքը:

2.2.21. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի մինչև 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը,

2.2.22. որպես ֆիլմի իրավատեր՝ իրականացնել օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքեր:

2.3. Ֆիլմարտադրողը պարտավոր է՝

2.3.1. Համաձայն Պայմանագրի դրույթների, պահպանել Աշխատանքը ավարտին հասցնելու համար նախատեսված ժամկետները:

2.3.2. Ժամանակին, պատշաճ կարգով իրականացնել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված

Աշխատանքը, դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

2.3.3. Ստեղծել ներկայացված սցենարին համապատասխան Ֆիլմ: Համապատասխանության տակ Կողմերն ընդունում են, որ այն չպետք է էականորեն տարբերվի սցենարից, որը ներկայացվել է համաձայն «Կինեմատոգրաֆիայի ոլորտին պետական ֆինանսավորման հատկացման նպատակով մրցույթների կազմակերպման եվ անցկացման» կանոնակարգի դրույթների: Սույն կետի իմաստով Էական են համարվում սյուժեն, մտահղացումը և ասելիքը:

2.3.4. Հիմնադրամին գրավոր տեղյակ պահել Ֆիլմի արտադրության ժամանակ տեղի ունեցած արտակարգ դեպքերի (արտակարգ դրության ազդեցություն), ինչպես նաև Ֆիլմի արտադրության ընթացքի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքների մասին՝ հանգամանքը (դեպքը) վրա հասնելու պահից սկսած 3 /երեք/ օրվա ընթացքում,

2.3.5. Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված կարգով Հիմնադրամից գրավոր պահանջ ստանալու դեպքում 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Պայմանագրի կատարման մասին տեղեկատվությունը:,

2.3.6. Հիմնադրամի պահանջով, բայց ոչ ավել քան եռամսյակը մեկ անգամ՝ դիտման համար տրամադրել նկարահանված նյութերը, մոնտաժված Ֆիլմը (աշխատանքային տարբերակը),

2.3.7. Ֆիլմի արտադրության, գովազդման, և վարձույթի հետ կապված գովազդատեղեկատվական բոլոր նյութերում պարտադիր կերպով հրապարակել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անվանումը՝ զինանշանով և Հայաստանի կինոյի հիմնադրամի անվանումը՝ լոգոյով:

2.3.8. Պայմանագրեր կնքել Ֆիլմի հեղինակների հետ, որոնք պետք է պարտադիր կարգով բովանդակեն դրույթները, համաձայն որի Ֆիլմի նկատմամբ բոլոր բացառիկ գույքային, հեղինակային իրավունքները, որոնք նախատեսված են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006 թվականի հունիսի 15-ի ՆՀՕ-142-Ն_ՀՀ օրենքով, հանդիսանում են Ֆիլմարտադրողի սեփականությունը, մասնավորապես, պետք է նշված լինի, որ հեղինակները փոխանցում են Ֆիլմարտադրողին հետևյալ գույքային բացառիկ իրավունքները.

- Ֆիլմի վերարտադրության (բոլոր տեսակի կրիչների վրա),
- Տարածման,
- Արտահանման,
- Հրապարակային ցուցադրման,
- Հրապարակային կատարման,
- Եթեր հեռարձակելու, ինչպես նաև կաբելով, հաղորդալարերով և համանման այլ միջոցներով՝ համընդհանուր իրազեկման համար,
- Ցանկացած լեզվով թարգմանության, կրկնօրինակման և /կամ տողագրման,
- Ցանկացած լեզվով այլ հրապարակային հաղորդման,
- Վերամշակման նկատմամբ,

Սույն կետի իմաստով հեղինակներ ասելով, Կողմերը հասկանում են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006 թվականի հունիսի 15-ի ՆՀՕ-142-Ն օրենքով տեսալսողական ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքներ ունեցող անձանց:

2.3.9. Առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ Հիմնադրամին տեղեկացնել Ֆիլմը

հայաստանյան և միջազգային կինոփառատոներին մասնակցելու, ինչպես նաև մրցանակների և պարգևների հայցման առաջադրելու մասին,

2.3.10. Ֆիլմի արտադրությունն իրականացնել Պայմանագրով նախատեսված ծավալով և ժամկետներում,

2.3.11. 2026 թվականին իրականացվող Աշխատանքի ավարտից հետո մինչև 2026 թվականի _____-ը, իսկ 2027 թվականին իրականացվող Աշխատանքի ավարտից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բովանդակային հաշվետվություն՝ ներառյալ ամբողջական տեղեկատվություն աշխատանքների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (նկարահանման ընթացքի լուսանկարներ, նյութեր, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն),

2.3.12. ներկայացնել Հիմնադրամին այլ համատեղ ֆիլմարտադրող կինոկազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի և /կամ այլ պայմանագրերի այն պատճենները (առկայության դեպքում), որոնցով հավաստիացվում և երաշխավորվում է Ֆիլմարտադրողի կողմից Պայմանագրի 1.7 կետով ստանձնած պարտավորությունների կատարումը:

2.3.13. 2026 թվականին իրականացվող Աշխատանքի ավարտից հետո՝ Պայմանագրի 1.8.1 կետով սահմանված ժամկետում, Հիմնադրամին հանձնել Ֆիլմի սևագիր մոնտաժված տարբերակը (rough cut) *(անիմացիայի դեպքում անիմատիկ)*՝ համաձայն նախապես հաստատված սցենարի, որի վերաբերյալ Կողմերը ստորագրում են համապատասխան հանձնման-ընդունման ակտ:

2.3.14. Աշխատանքի (Ֆիլմի արտադրության) կատարման ավարտից հետո՝ Պայմանագրի 1.8 կետով սահմանված ժամկետում, հանձնել Հիմնադրամին Ֆիլմի վերջնական տարբերակը հիշողության արտաքին SSD կամ HDD կրիչով ՝ MP4 (նվազագույնը 1920x1080) և DCP ֆորմատով ֆայլերը, որի վերաբերյալ Կողմերը ստորագրում են համապատասխան հանձնման-ընդունման ակտ:

2.3.15. Աշխատանքի (Ֆիլմի արտադրության) կատարման ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել ֆիլմի մասին էլեկտրոնային տարբերակով տեղեկատվություն՝ cfarmenia.am կայքում ներառելու համար՝ հայերեն և անգլերեն լեզուներով /սինոփսիս/լոգլայն (հակիրճ, առավելագույնը՝ 100 բառ), թրեյլեր, պաստառ/աֆիշա (ուղղահայաց՝ 1000px * 1410px)/,

2.3.16. Հիմնադրամի պահանջով 4 (չորս) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պայմանագրի կատարմանը վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

2.3.17. Աշխատանքի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները), ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները ենթակա են վերադարձման Հիմնադրամին՝ ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

2.3.18. Հիմնադրամի պահանջով Ֆիլմի նկարահանման տարբեր վայրերից Ֆիլմի աշխատանքային իրավիճակների վերաբերյալ, ինչպես նաև փառատոնային արշավի ընթացքում՝ Հիմնադրամի պահանջով տրամադրել բարձր որակի լուսանկարներ (առնվազն 300 dpi որակով, JPG, PNG կամ RAW ձևաչափով, հորիզոնական և ուղղահայաց կադրերով առնվազն 2000 px լայնություն) և/կամ տեսանյութեր (առնվազն Full HD 1920x1080 px որակով, առանց մոնտաժված գովազդային տարրերի, չմոնտաժված բնօրինակի տրամադրում): Սույն

կետում նշված լուսանկարները և տեսանյութերը օգտագործվելու են Հիմնադրամի կայքէջում, սոցիալական մեդիահարթակներում, տպագրական նյութերում և մամուլի հաղորդագրություններում՝ Հիմնադրամի կողմից լուսաբանման նպատակով:

2.3.19. Պայմանագրի 1.6.1 կետում նշված գումարի ծախսման վերաբերյալ Հիմնադրամին ներկայացնել հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Պայմանագրի 1.1 կետով նախատեսված Աշխատանքի վերաբերյալ՝ Պայմանագրի Հավելված 1-ի, Հավելված 2-ի և Հավելված 3-ի համաձայն:

2.3.20 Աշխատանքի (Ֆիլմի արտադրության) կատարման ավարտից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ ֆինանսական հաշվետվություն Հիմնադրամի կողմից տրամադրված և Ֆիլմարտադրողի կողմից ներդրված գումարների ծախսման մասով, ինչպես նաև ամփոփ ֆինանսական հաշվետվության համապատասխան ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթեր:

2.3.21. Մինչև Ֆիլմի հրապարակային ցուցադրումը (առաջին ցուցադրություն, մշակութային միջոցառումներ, վարձույթ), ինչպես նաև արտերկրում հայկական կինոյի օրերին, կինոփառատոներին, կինոշուկաներին Ֆիլմի մասնակցությունը ապահովել Ֆիլմի փակ դիտումը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հիմնադրամի ներկայացուցիչների պարտադիր ներկայությամբ:

2.3.22. Պայմանագրի 1.1 կետով նախատեսված Աշխատանքի կատարման գործընթացը 1.6 կետով նախատեսված գումարների շրջանակներում կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ֆիլմարտադրողը պատասխանատվություն է կրում իր կողմից 2.3.19 և 2.3.20 կետերում նշված Հաշվետվություններով ներկայացված տվյալների հավաստիության համար:

2.3.23. Հիմնադրամին տրամադրել՝ օտարերկրյա պետություններում հայկական կինոյի օրերին, շաբաթներին, միջազգային կինոփառատոներին, կինոշուկաներին ներկայացվող Ֆիլմի մասնակցության և արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

2.3.24. Ֆիլմի տարածման ընթացքում ստացված եկամուտի մասին յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնել հաշվետվություն (Box office և այլն) մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.3.25. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել աշխատանքների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Հիմնադրամի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

2.3.26. Պայմանագրով սահմանված աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Հիմնադրամի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք Պայմանագրի 1.6 կետով նախատեսված գումարի 6 (վեց) տոկոսի չափով:

2.3.27. Ֆիլմի մակագրերում նշել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անվանումը և Հայաստանի կինոյի հիմնադրամի անվանումը:

<u>2.4. Հիմնադրամը պարտավոր է՝</u>

2.4.1. կատարել Պայմանագրի 1.6.1 կետում նշված գումարի տրամադրումը հետևյալ կարգով՝

- Նախահաշվային գնի 90 %-ը վճարվում է Կողմերի միջև հաստատված /Հավելված 2/ ժամանակացույցի համաձայն, փուլային վճարման կարգով՝ յուրաքանչյուր փուլի ֆինանսական հատկացուների հաշվետվությունը Հիմնադրամին հանձնելուց հետո:
- Նախահաշվային գնի 10% վճարվում է Ֆիլմարտադրողին վերջինիս կողմից Պայմանագրի

2.3.11, 2.3.13 և 2.3.19 կետերով և Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող պատշաճ կարգով լրացված և վավերացված Հավելված 3 ներկայացնելուց, ինչպես նաև Հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև համապատասխան հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

2.4.2. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի 2.3.7 կետի պահաջները կատարելու համար Ֆիլմարտադրողին տրամադրել համապատասխան տեսաձայնային նյութեր:

3. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

3.1. Պայմանագրով սահմանվում է, որ Ֆիլմի ստեղծագործական անձնակազմի հետ կնքված Պայմանագրերով Ֆիլմի նկատմամբ օգտագործման բացառիկ իրավունքը և այլ Պայմանագրերով սահմանված իրավունքները, միջազգային կոնվենցիաներով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված առավելագույն ժամկետներով փոխանցվում են Ֆիլմարտադրողին ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

3.2. Սույնով Ֆիլմարտադրողը երաշխավորում է, որ պարտավորվում է զերծ պահել Հիմնադրամին ապագայում ցանկացած երրորդ անձանց կողմից Հիմնադրամի պահանջներին ոտնձգություններ ներկայացնելու դեպքում, որոնք կապված են հեղինակային իրավունքների հետ, կարգավորել բոլոր նմանատիպ տեսակի խնդիրները և տարաձայնությունները լուծել իր հաշվին և իր միջոցներով:

3.3. Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 և 3.2 կետերով նախատեսված դրույթները,Կողմերն ընդունում են, որ Պայմանագրի 1.1 կետում նշված Ֆիլմի նկարահանման ողջ արտադրության աշխատանքների իրականացման իրավունքը պատկանում է «_____» ՍՊ ընկերությանը (Ֆիլմարտադրողին):

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Հիմնադրամն իրավունք ունի առանց իրականացված Աշխատանքների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի ֆիլմարտադրողը ժամանակին չի սկսում ֆիլմի արտադրության իրականացումը, կամ ֆիլմի արտադրության իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. ֆիլմարտադրողը երկու և ավելի անգամ խախտել է պայմանագրով նախատեսված առանձին աշխատանքների իրականացման ժամկետները,

գ. իրականացված աշխատանքները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված պահանջներին:

4.2 Ֆիլմարտադրողն իրավունք ունի իրականացված Աշխատանքների արդյունքը Հիմնադրամի կողմից առանց հիմնավորման չընդունելու և Հիմնադրամի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

4.3. Պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են տեղի ունենալ միայն

Կողմերի համաձայնության դեպքում, որոնք կատարվում են գրավոր կերպով, ստորագրվում են Կողմերի կողմից և հանդիսանալու են Պայմանագրի անբաժանելի մասը:

4.4. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5. Պայմանագրի դադարման դեպքում Կողմերը պարտավորվում են կատարել Ֆիլմի արտադրության համար նախատեսված Ֆինանսական միջոցների համապատասխան հաշվարկ, որը պետք է կատարվի Ֆիլմարտադրողի կողմից ներկայացված մանրամասն հաշվարկի հիման վրա:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

5.2. Պայմանագրի 5.1. կետի պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

6.2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը սահմանվում է մինչև 2026թ. _____-ը:

6.3. Պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի համաձայնությամբ:

6.4. Աշխատանքի արդյունքը Հիմնադրամին հանձնվում է Կողմերի միջև ստորագրված հանձնման-ընդունման ակտի, համապատասխան հաշիվ-ապրանքագրի, ինչպես նաև նախահաշվի հոդվածներին համապատասխան կատարված ծախսերը ներկայացնող հաշվետվությունների հիման վրա:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, Կողմերից մեկին վնաս պատճառելու համար Կողմերը կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում:

7.3. Պայմանագրի 2.3.24 կետով սահմանված պարտավորությունը 2 և ավելի անգամ խախտելու դեպքում Հիմնադրամը իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:

7.4. Պայմանագրով սահմանված ժամկետները Ֆիլմարտադրողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս Հիմնադրամին վճարում է տույժ Պայմանագրի 1.6 կետում նշված գումարի 0,6 (զրո ամբողջ վեց տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

7.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Ֆիլմարտադրողը Հիմնադրամին վճարում է տույժ՝ Պայմանագրի 1.6 կետում նշված գումարի 0,06 (զրո ամբողջ վեց հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են Հիմնադրամին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

7.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում Ֆիլմարտադրողը, Հիմնադրամին վճարում է տուգանք ոչ պատշաճ կատարված յուրաքանչյուր պարտավորության համար՝ Պայմանագրի 1.6 կետում նշված գումարի 0,6 (զրո ամբողջ վեց տասնորդական) տոկոսի չափով:

7.7. Ֆիլմարտադրողը պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված հաշվետվությունների տվյալների հավաստիության համար:

7.8. Համարտադրության միջոցով արտադրությունը կազմակերպելու դեպքում համարտադրողի չկատարած պարտավորությունների պատասխանատվությունը կրում է Ֆիլմարտադրողը: Համարտադրողի կողմից, ցանկացած պատճառաբանությամբ, իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում, Ֆիլմարտադրողի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հարգելի համարելու հարցը որոշվում է Հիմնադրամի կողմից:

7.9. Այն դեպքում, երբ Ֆիլմի արտադրության բյուջեի փոփոխության կամ համալրման արդյունքում Ֆիլմարտադրողի մասնակցության չափը փոփոխվում է այնպես, որ վերջինս առավելագույն մասնակցություն ունեցող ֆիլմարտադրողից դառնում է նվազագույն մասնակցություն ունեցող ֆիլմարտադրող, ապա տրամադրված պետական ֆինանսավորման չափը ենթակա է վերանայման՝ նվազագույն մասնակցություն ունեցող համատեղ ֆիլմարտադրության նախագծերի համար օրենսդրությամբ սահմանված չափերին համապատասխան:

Նման դեպքում Ֆիլմարտադրողը պարտավորվում է Հիմնադրամին վերադարձնել Պայմանագով փաստացի տրամադրված գումարի և նվազագույն մասնակցություն ունեցող ֆիլմարտադրողների համար օրենսդրությամբ սահմանված պետական ֆինանսավորման առավելագույն չափի միջև առաջացած տարբերությունը՝ Հիմնադրամի պահանջը ստանալուց հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում:

8.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

8.2. Անհաղթահարելի ուժի հանգամանքներ ասելով հասկացվում են արտաքին արտակարգ իրադարձությունները, քաղաքական ու տնտեսական փոփոխությունները, որոնք անմիջականորեն ազդում են պայմանագրային պարտավորությունների կատարման վրա և տեղի են ունեցել Կողմերի կամքից անկախ (հրդեհներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ, համաճարակներ, վթարներ, պայթյուններ, դժբախտ պատահարներ, գործադուլներ, զանգվածային անկարգություններ, քաղաքացիական բնակչության հուզումներ, թշնամական ուժերի գործողություններ, պատերազմ, ինչպես նաև բոլոր մակարդակների իշխանության մարմինների, դատական մարմինների կարգադրություններ):

8.3. Նման հանգամանքների մասին դրանց ենթարկված Կողմը պետք է մյուս Կողմին հաղորդի դրանց վրա հասնելու պահից ոչ ուշ, քան 5 (հինգ) օրվա ընթացքում:

8.4. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի կարգով լուծել սույն Պայմանագիրը:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Պայմանագիրը, Կողմերից որևէ մեկի վերակազմավորվելու դեպքում պարտադիր է տվյալ Կողմի իրավահաջորդի համար: Ֆիլմի արտադրությունը համարվում է ավարտված՝ Ֆիլմը Պայմանագրով սահմանված կարգով և ձևաչափով Հիմնադրամին հանձնելու և երկկողմ ստորագրված ակտի առկայության դեպքում:

9.2. Պայմանագրի դրույթները մեկնաբանելիս Կողմերը պետք է ելնեն դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Այդպիսիք պարզ չլինելու դեպքում Պայմանագրի որոշակի դրույթի մեկնաբանությունը որոշվում է՝ Պայմանագրի մյուս պայմանների և Պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

9.3. Կողմերը չպետք է բանակցությունների ընթացքում ստացված Պայմանագրի կնքման և իրականացման, հատկապես՝ Ֆիլմի վրա աշխատելու միջոցների, պլանավորված և իրականացված գործողությունների, այսուհետ՝ «Գաղտնի տեղեկություններ», վերաբերյալ երրորդ անձանց տեղեկություններ տրամադրեն: «Գաղտնի տեղեկություններ»-ի հրապարակման արգելքը գործում է ինչպես Պայմանագրի ուժի մեջ լինելու, այնպես էլ նրա ժամկետանց լինելու կամ դադարացվելու դեպքում: Կողմերը չեն օգտագործելու տվյալ տեղեկությունները որևէ այլ նպատակներով, բացի Պայմանագրի իրականացման նպատակից: Սույն կետի իմաստով Կողմերից յուրաքանչյուրը կապահովի, որպեսզի իր աշխատակիցները, գործընկերներն ու տվյալ Պայմանագրի իրականացման համար նշանակված այլ անձիք պարտավորված լինեն չբացահայտել «Գաղտնի տեղեկությունները»:

«Գաղտնի տեղեկություններ» են համարվում նաև այն տեղեկությունները, որոնք բացահայտման պահին հստակորեն կնշվեն որպես այդպիսին:

9.4. Ցանկացած տեսակի նամակագրություն, նամակ, ծանրոց ուղարկվում է փոստով, պատվիրված նամակով Կողմի՝ Պայմանագրում նշված հասցեին: Սույն կետի իմաստով առաքված է համարվում նաև Պայմանագրի 10-րդ բաժնում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակագրությունը՝ այն ուղարկելուց 2 (երկու) աշխատանքային օր հետո:

9.5. Պայմանագրի հոդվածների վերնագրերը կրում են օժանդակ բնույթ և չեն կարող

օգտագործվել Պայմանագրի պայմանները մեկնաբանելու համար:

9.6. Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև կնքված կամ Կողմերի կողմից ներկայացված բոլոր Հավելվածները, արձանագրությունները, հաշվետվությունները, ակտերը, նախահաշիվները և այլ փաստաթղթերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.7. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԻՄՆԱԴՐԱՄ	ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՂ
Հայաստանի կինոյի հիմնադրամ Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 3ա Գրանցման համար՝271.210.02511 ՀՎՀՀ՝ 01203271 ՀՀ Ֆինանսների նախարարություն (Գանձապետական բաժանմունք) 900018001744 (2950) AMD Հեռ.՝ (+37410)52-20-32/(+37410)52-20-38 Էլ. Փոստի հասցե՝ info@cfarmenia.am Ինտերնետային կայք՝www.cfarmenia.am	

Տնօրեն՝ Դավիթ Բանուչյան